Ս. ԵՐԿՐՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՄԲ

Ապրիլի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանից խորը ցավով և անհանգստությամբ տեղեկացավ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանի սան՝ 22-ամյա հայաստանցի (Սյունիքի մարզ, գյուղ Քարահունջ) Արմեն Սինանյանի վիրավորվելու մասին: Ուրարակիր Արմեն Սինանյանը հայ 7 հոգևորականներից էր, որոնք շարունակում են մնալ Բեթղեհեմի Ս. Ծննդյան տաճարում: Հույն և Լատին Եկեղեցիների հոգևորականների հետ մեկտեղ (ընդհանուր թվով՝50 հոգի) նրանք 10 օր է, ինչ շրջափակված են սրբավայրում:

Համաձայն Երուսաղեմի Հայոց Պատրիարքի հաղորդած տեղեկության, Արմեն Սինանյանը վիրավորվել է աջ ուսից: Կրակոցի պատճառները դեռևս հստակ չեն: Արմեն Սինանյանն անմիջապես հոսպիտալացվել է Հադասսա համալսարանի հիվանդանոց և վիրահատության ենթարկվել: Պատրիարքարանից ստացված վերջին տեղեկության համաձայն, վիրահատվածի առողջական վիճակը կայուն է: Նա գտնվում է մշտական խնամքի ներքո: Հայաստանում Վեհափառ Հայրապետն անձամբ հանդիպում կունենա նաև Սինանյանի ծնողների հետ:

Ամենայն Հայոց Հայրապետը վերջին մի քանի շաբաթների ընթացքում մշտական կապի մեջ է Երուսաղեմի Ամենապատիվ Պատրիարքի հետ և շարունակում է լուրեր ստանալ տարածաշրջանում տիրող իրավիճակի մասին:

«Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և աշխարհասփյուռ Հայ Առաքելական Եկեղեցին աղոթում են Երուսաղեմի Պատրիարքի, Ս. Հակոբյանց միաբանության, Ս. Երկրում բնակվող հայ համայնքի ապահովության համար: Մենք նաև աղոթում ենք ուրարակիր Արմեն Սինանյանի շուտափույթ ապաքինման, Բեթղեհեմում տիրող իրավիճակի խաղաղ լուծման համար և իսրայելյան ու պաղեստինյան ժողովուրդների միջև վերջնական հաշտության հաստատման համար»,- հայտարարեց Նորին Սրբությունը:

Իսրայելա-Պաղեստինյան հակամարտության վերջին շրջանի աննախադեպ լարվածության, ինչպես նաև Բեթղեհեմի Սուրբ Ծննդյան սրբատեղիների ռազմական գործողությունների շրջագծում հայտնվելու առնչությամբ Հայոց Հայրապետն արդեն իսկ իր մտահոգությունն ու անհանգստությունն է հայտնել՝ ուղերձ-նամակներ հղելով Իսրայելի վարչապետ Արիել Շարոնին և Պաղեստինյան իշխանության առաջնորդ Յասեր Արաֆաթին: Վեհափառ Հայրապետը կոչ է արել հակամարտող կողմերին «գործադրել ամեն միջոց, որպեսզի Բեթղեհեմյան սրբատեղիները զերծ մնան պղծումներից ու ավերածություններից»: